



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

01 հունվար 2024 թվական

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆՆՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Ամանորին սովորաբար մենք ամփոփում ենք նախորդ տարվա հաջողություններն ու ձեռքբերումները, ցավոք նաև կորուստներն ու հիասթափությունները: Միևնույն ժամանակ ծրագրում ենք նաև գալիք տարվա մեր նպատակներն ու դրանց իրագործման ուղիները: Եվ ուրեմն, թո՛ղ այդ նպատակները լինեն հոգուտ մեր երկրի, մեր համայնքի շենացման, լինեն ի նպաստ մեր հայրենիքի զարգացման:

Մեծ ցավով և ափսոսանքով հիշում ենք ու վառ պահում մեր երկրի համար իրենց ամենաթանկը՝ կյանքը նվիրաբերած հերոսների հիշատակը: Հավե՛րժ փառք ու պատիվ մեր բոլոր նահատակներին:

Թո՛ղ նրանց ընտանիքներում այսուհետ միայն ավետիսներ հնչեն, և թող մեր երեխաները մեծանան խաղաղ երկնքի տակ: Իսկ մեր արցախցի հայրենակիցներին մաղթում եմ ուժեղ կամք և հավատ, մենք ձեր կողքին ենք և շարունակելու ենք անել ամեն ինչ, որ դուք ապրեք ապահով և սիրով շրջապատված հայրենիքում:

Գալիք տարում Արաքսի համայնքապետարանը շարունակելու է հետևողական քայլեր ձեռնարկել մեր համայնքի հետագա զարգացման, բնակավայրերի բարեկարգման, և համայնքի բնակիչների բարեկեցիկ կյանքի որակն ապահովելու ուղղությամբ: Այն, ինչ մենք անում ենք այսօր, առաջին հերթին անում ենք գալիք սերունդների համար, որպեսզի նրանք ապրեն խաղաղ, անվտանգ ու բարեկեցիկ երկրում:

Մեկ անգամ ևս շնորհավորելով Ամանորի և Սուրբ Ծննդյան լուսավոր տոների առթիվ՝ մաղթում եմ ձեզ, սիրելի՛ հայրենակիցներ, առողջություն, անձնական երջանկություն և բարօրություն: Թո՛ղ խաղաղությունը անխախտ լինի Հայոց աշխարհում: Թո՛ղ 2024 թվականը միայն ձեռքբերումների և բարի գործերի իրականացման տարի լինի:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ